ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 մայիսի 2015 թվականի թիվ 92 - Ա

ՆԱՐԵԿ ՎԱՆԵՍՅԱՆԻՆ «ԻՋԵՎԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 23-Ի ԹԻՎ 9-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասի 1/ կետով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետով՝ ՀՀ Տավուշի մարզպետի 2011թ. դեկտեմբերի 19-ի «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի ենթակայության առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության /նշանակման/ մրցույթի կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2007 թվականի հունվարի 29-ի թիվ 6-Ն և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2007 թվականի հունվարի 29-ի թիվ 7-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 203-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 71-րդ կետով՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի ենթակայության «Իջևանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի 2015 թվականի մայիսի 27-ի «Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչելու մասին» N 4 որոշումը, եզրակացությունը և Ն. Վանեսյանի 2015 թվականի մայիսի 27-ի դիմումը՝

ո ր ո շ ու մ եմ.

1. Նարեկ Տիտանի Վանեսյանին 2015 թվականի մայիսի 29-ից նշանակել «Իջևանի բժշկական կենտրոն» ՓԲԸ տնօրենի պաշտոնում և կնքել աշխատանքային պայմանագիր վեց ամիս ժամկետով:

2.Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Տավուշի մարզպետի 2015 թվականի հունվարի 23-ի թիվ 9-Ա որոշումը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ. ԱԲՈՎՅԱՆ

2015թ.մայիսի 29
ք.Իջևան